

րենացին պարզ ասուի է, որ Հայկը թարեւլոնցի էր և թէլին ընկերակից։ Այս, ինչպէս և յետոյ ցցց կտանք ուրիշները՝ ապացոյց են, որ մեր վէպը եղծուած ու դիտաւորեալ փոփոխութիւնների է ենթարկուած։ Ո՞րն է հիմայ կեղծն այս երկուսից, կամ Հայկի տիպը և կամ նրա բարելոնցի լինելը։ Տիպը կեղծելու ոչ կարիք կար ոչ հաշիւ։ Բայց նոյն անձը թարելոնց հանելու, սեմիտացնելու, մեր վէպի հերոսն Աստուածաշունչի պատմածին հետ կապելու ոչ միայն կարիք այլ և անհրաժեշտ պահանջ կար, քրիստոնեայ հայերի զգացումները ցոյելու նրանց ծագումը Ս. զրքի հեղինակաւոր վկայութեամբ հաստատելու և ազգային հին ու կասկածելի աւանդութիւնը սրբագրելու համար։

Ահա թէ որն է կեղծիքը։ տիպերն հին են և անտրատ միայն նրանց գործողութեան ու ծագման հանգամանքներն են եղծած ի համայս կրօնական մօտիւների, և արգիւնքն այն է եղել որ մի զուտարիւն գերմանական տիպ զուրս է եկել սեմիտի դերում, առանց սակայն այս վերջինի ֆիզիքական յատկանիշները գել կեղծումներով իր վրայ առանելու... Եղծելով Հայկի մասին եղած աւանդութիւնը, կարիք կար նաև կեղծելու նրա սերնդեան ծագումը, թագրատունիք Հայկի սերունդ էին համարուամ (Խոր. Ա. ԽԲ.), Խորենացին կարեսը է համարուամ հերքել այդ աւանդութիւնը՝ «յիմար և անոնք, անուանելով եղածը որովհետեւ ինքը մտադիր էր նոյնը յետոյ «ոճով»—պատմելու . . . ոմ, որ ստեղծուած էր Ս. զրքի պատմածները ինկարկելու և ազգայինը սեմիտայնելու ցանկութեամբ . . . թագրատունիների հետ մեծ իշխանական առջմերից որին չի գուրզուրել սեմիտանալու տենչանքը. Ամստունիներին յիշենք արդեօք, թէ Արծրունիներին։

Մենակ Հայ վէպը եղծողն ու Հայ իշխանները չեն որ աշխատուամ են սեմիտանալ։ Այդ ամէնը կատարուած է զիտակական հա-

շիւներով։ Տարօրինակն այն է, որ մենք ինքներս, ներկայում, առանց այդպիսի նաև ատակների ու զրդումների սեմիտացնուամ ենք մեր հերոսներին, հակառակ մեզ հասած պատմական աեղեկութիւններին։ «Խարտեաշ և գանգրահէկ» Հայկը, մեր տներում սովորա կան գարձած պատկերների մէջ, երևան է գալիս որպէս մի սեմիտ, այդ ցեղին յատուկ ահազին քթով . . . Եթէ Խորենացին յարութիւն առնէր, անատրակոյս պիտի զարմանար Հայկի տեղ մի Արրահամի թռռ տեսնելով։ Այդ դեռ բաւական չէ. մենք եղծելու սեմիտացը ենք ոչ միայն Հայկի նման տուապելական, այլ և բուն պատմական անհատներ։ Հակառակ մեզ հասած ստոյդ ցեղարանութեան։ Աւարայրի հերոսը, յայտնի է, որ մօր կողմց պարթե էր, իսկ հօր կողմից, եթէ հաւատանք Խորենացուն, շինացի, — ուրեմն մի մօնքով արիական խառնուրդ, բայց և այնպէս, նրա պատկերն էր, այսօր նկարուած է սեմիտի քթով։ Մենք այսօր այդ սապարիզում այնքան հեռու ենք գնացել որ սեմիտ կերպարանքի այդ բնորոշ տարրը ծանաչում ենք «Հայկական քթօթ», անունով, այն ինչ մենք սրբական ժողովուր, ենք համարում։

Ինչպէս ամեն բան, հարկաւ, սա էլ ունի իր խորին պատմառները, որոնք ծնունդ են մարդա հոգեբանական հիմունքների . . . Առաջիկայում պիտի ջանանք, մեր ուժերը ներածին չափ, բացարել այս ամենը . . .

Դր. Վանցեան



### ՔՆՇՈՒԹԻՒԽՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՐԻ

(Եարունակութիւն) \*

Ո Կ Օ

Ե և կ ձայնեցուն նման՝ գրաբարե ո և օ նաշիւններն ալ Ենթակայ եղած լինելով գրեթէ

\* Պատահի, ինչպէս երևում է, այնտան նեռու և զնացել այդ ասկարիզում, որ Բագրատունիներին համել են ցանկացել ուղղակի Դաւիդի սերմուց . . .

Նոյն փոփոխութիւններուն, երկրուքը կը միացնենք այստեղ՝ դասաւորելով՝ մեր քննութիւնը ճիշտ այն ձևով, ինչպէս ե և է:

### Ա. Ո և Օ շեշտի տեսակէտով.

1. Գրաբարի միավանկ բառերուն մէջ ո և օ ձայններուն շեշտն անփոփոխ մնացած, մինչև իսկ երբ նոյն բառը Ղարաբաղի բարօքան մէջ բազմավանկի է Քիրածուած: Օր. փոցին՝ փոցին տէին գոխն (աղաւանի). վլիւր՝ որս. վլիւնն կամ վլիւն՝ ոսն. հուլ՝ ովլ. իսկօք՝ խոզ. մօսրկ՝ մօս. ծիծր՝ օձ. օնք:

2. Բազմավանկ բառերու մէջ շեշտեալ ո և օ վերածուած անշեշտի: Օր. րիմիկ՛ թագաւոր. բաշկուն՝ քաջը—ոտ (գիւահար), ուշունց՝ յեշոց. անրումը՝ աղօն. հմանիլուն՝ ամաշկուա. աղուրկ՝ աշզոթք:

3. Աերջաւանկի շեշտը տեսափոխուած վերջընթեր ո և օ ձայններուն վրայ: Օր. մօսուր՝ մոփիք. նորըկ՝ նօթիք. հետի՝ հոգի. անջակ՝ յաջողակ. սնւրուն՝ տորոն. կիտեմն կամ կուտեմն՝ կուտեմն. լոյքրիկ՝ ազօթել. կէրբնուկ՝ դորանուկ:

4. Գրաբարի վերջընթեր վանկէն առաջ դանուած բոլոր ո և օ ձայններն երբ անշեշտ՝ բի վերածուած: Օրինակնեցն են. կծկուուր՝ կոծուուր. րուտուց՝ օրորոց. սրիներկ՝ սովորել. յրիմիշիքր՝ չորեցաբաթի. բրիմիշիք՝ որբեայրի. խրաված՝ խորած. խրավիկ՝ խորովել. շնրինալուր՝ շնորհաւոր. տղակողակ՝ դողոգողակ. լրնալ՝ լրդանալ. բրնալ՝ որտաւալ. բրնում՝ ողորմիլ. բրնջիկ՝ սղորել. խոսրվանվալ՝ խոսուուլանուիլ:

5. Փոխանակ յարաշեշտի բառերը մնացած շեշտոյրը բայց դարձեալ անշեշտ ո և օ ընկած: Օր. փրուան՝ փորսող. մօրիւք. ուրիշ օրինակ չկայ:

6. Հողովման և աժանցման ժամանակ շեշտէ առաջ դանուած օ ձայնը հակառակ շեշտադութեան ընդհանուր օրէնքներուն հակառակ նոյն իսկ վերևի 4-րդ պայմաննին: կը վերածուի ու-ի փոխանակ չնշուելու. այսպէս կօրիք՝ կորիք. սեռ. կուրելոյի: հորեցի: հուրեցի: ուրագ:

7. Բոլորովին չնշուած անջըս ո և օ ձայններու մասին օրինակ շկայ. միայն «ապոդուատ» և «կոստորել» բառերուն միջին ո ձայնն ընկած է բոլորովին. որով բառերն ստացած են անկանոն պիզիատ. կօտեկ՝ ձեւերը: միւ.՝ պիզիատ. կօտեկ՝ ձեւերը: գուրիսի բարբառն ունի սակայն բոլորան: ապոդուատ ձեւեր չեն. անջին ապոդուատ է ապոդական է նաև կծիխուր. թաղուած գիւղի կը գործածէ կծիխուր: իսկ Գորիսի բարբառը վերածած է զայն կծիխուր ձևին: Գոլով կծիխի իսկ և յակո բառերուն ասոնցին առաջինը թաղուած գիւղի բարբառին յատուի ձեւն է, որուն տեղ ըստն Ղարաբաղն ունի հիւիք, իսկ Գորիսի հիւիք. երկրորդը յատուէ գորիսի, իսկ

վանվալ՝ խոստովանուել. շնունավուր (կոյ նաև ուղիղ ձևը շնրինավուր)՝ շնորհաւոր. կուգանակ՝ գողանալ, պիւղիւրմել:

### Բ. Ո և Օ բառի մէջ.

Ո և Օ բառի մէջ կը կրեն հետեւեալ ձայնափոխութիւնները.

1. Առհասարակ կը վերածուին օ ձայնին. խիստ բազմաթիւ օրինակներուն մէջին յեշենք միայն մի քանի հատը. միխուր՝ մոխիք. ցորեն՝ ցորեան. մօրիք՝ մօտ. պօնք՝ պորտ. փօխենք՝ փօխինդ. հնեօր՝ ամօթ և լն և լն և լն:

Այս օ ձայնը հետզհետէ աւելի գոցուելով կօ և ո շրջաններէն կանցնի և կը բարձրանայ մինչև իս աստիճաննը. ուր իս երանգը փոխելով ետ կը դառնայ և հետջետէ բացուելով իս ըէ, և մինչև ա ձենին կը հասնի: Այս փոփոխութիւնները տեղի կունենան հետեւեալ պայմաններուն մէջ:

2. — Կ. Այս փոփոխութիւնը տեղի կունենայ գոց վանկերու մէջ և միայն ր, ո, զ, ի և ձայններէն առաջ. այսպէս են հետեւեալ օրինակները. ցիկօ՛ շլոր, սալոր, պրեկօ՛ պղամոր (շրջեալ միւ. պղտօր). շկօ՛ շոր, ծկօ՛ ծոր, իսմակօ՛ իսմակոր. էկօր, չորք, չորս (Գորիսի բարբառով կը ըստի լօր): դկօր՝ ուղգորդք, զորդ (նմանապէս Գորիսի և Թաղուած գիւղի բարբառով կը ըստի դօր): բայց Գորիսի բարբառով պիւլիօր՝ բալոր (բոլորակի կուլոր), որ ըստն Ղարաբաղի բարբառին մէջ պիւլիոր ձեւն ունի, ձայնաւորներու համարանութեամբ. — հիւյկունը՝ ոլոռն (Գորիսի բարբառով. իսկ ըստն Ղարաբաղի մէջ հիւյկունը), — կյուօր (կը ըստի նաև կյուօր)՝ գող. տկօր (բուն Ղարաբաղի մէջ և Գորիսի միակունիք ոլոռն): — կյուօր (կը ըստի նաև կյուօր)՝ գողիկը բարբառով տօղ՝ գող. ասկէ տղեկնալ՝ գողգողակ. — գետի՝ ապախ. կյրկօրի՝ (Գորիսի և Թաղուած գիւղի մէջ կյրկօրի): գլուխ. տկօր՝ լորամարգի (կը բաբարի դիմմ՝ աղաւնի բառէն):

Աերել կանոնն հակառակ բաց վանկի մէջ կը դանուին մէկօր՝ ջորի. երրիկօր՝ ոլորել. կծկուուր՝ կոծկուուր. իսկ զ, գ ձայններուն առաջն կը դանուին մէկօր՝ հոգի, կոշ՝ զոդ, գիւրել, և յակօր՝ խոզ ձևերը: Սակայն ասոնց ալ այնքան գործածական և ընդհանուր ձեւն. մէկօր ձեւն ունի Թաղուած գիւղի բարբառը, ըստն Ղարաբաղի բարբառը կը գործածէ մօրէ, իսկ Գորիսի ունի մօրէ. — կծկուուր ըստն Ղարաբաղի ձեւն է թէւէ, սակայն ասոր հետ գործածական է նաև կծիխուր. Թաղուած գիւղի կը գործածէ կծիխուր: իսկ Գորիսի բարբառը վերածած է զայն կծիխուր ձևին: Գոլով կծիխի իսկ և յակո բառերուն ասոնցին առաջինը թաղուած գիւղի բարբառին յատուի ձեւն է, որուն տեղ ըստն Ղարաբաղն ունի հիւիք, իսկ Գորիսի հիւիք. — երկրորդը յատուէ գորիսի, իսկ

վերջինը Գորիսի բարբառնին մէջ ունի խօս ձեւը՝  
Յուն. այս ձայնաշրջութեան համար առանձին կանոն մը կարելի չեղաւ գտնել. եղած օրինակները հետեւալերն են. աղումնը կամ աղուն աղօն, համուր՝ ամօթ, աղուուր՝ աղոսու. հիշվուր կամ հիշվոր՝ ալեսոր, աղուրի կամ աղօրի՝ հմ. հաղուն՝ խաղող, պաւուր կամ պօթօն շերամի բժուժ. կյանիաշ կամ կինուշ՝ զոմէշ. կյում կամ կիւմ՝ գոմ. կյունանայ՝ գողանալ, բնուրուն (շրջեալ \* բումուր) կամ բնուք՝ թոնիք, հունց՝ մնց. լինուր՝ լակոտ. շնուհավուր՝ շնորհաւոր. մում՝ մոմ. կուրիուր՝ կորկատ, կուտեմնը կամ կիտեմնը՝ կոտեմն. կծնիուր և լն՝ կծոխուր. ծուպ կամ ծօպ, ծում՝ ծոմ. խէլուն՝ խելօր. ուրուն կամ սօրուն՝ տորոն. ուրունց կամ խշունց՝ յեշոց. կարու կամ կարուն՝ հմ. խուփ կամ խօփ՝ խոփ. մարու կամ մարուն՝ որոճալ, մրկուն՝ միւռուն. այսպէս նաև—ոց,—ու մասնիկները. ինչպէս յիշուս՝ աղտոտ. հմանիկուս՝ ամաշկոտ. յանկուս՝ լուսնոտ (քաջրոտ, քաջը կամ քաջնը ունեցող). խարտոց կամ խարտոց՝ խարտոց. բրուրոց կամ բնուրոց, բնորոց, մենանոց՝ մատանոց, մատանոց և լն:

4.—ի. այս ձայնափոխութիւնն ալ առանձին օրէնքի մը ենթակաց չթուիք. եղած սակաւթիւ օրինակներն են. կիսկ՝ գոզ, մէզ, հիմի՝ հոգի, պիշիլուր՝ բոլոր բոլորակի, կոլոր, կիւմ՝ գոմ և խշունց՝ յեշոց. Դիտելի կետն այն է որ ասոնք բոլորն ալ բացի առաջինէն ունեն նաև ուռով կամ հօռով ձեւերն ալ, ինչպէս որ վերը երենց կորդին տեսանք:

5.—ի. այս ձեւն սատած են միայն երկու բառ, այն է. կիտեմն՝ կոտեմն (որ Թաղոտ գիւղի բարբառով կ'ըսուի կուտեմնը, իսկ Գորիսի մէջ կուտեմնը՝) և կինուշ (Գորիսի բարբառով, բուն Ղարաբագ և Թաղոտ գիւղ կինուշ):

6.—ը. այս ձայնաշրջութիւնը տեղի կ'ունենայ ամէն անգամ որ ո յաջորդէ վ ձայնինտ ինչ որ ալ բլայ ազս վ-ին ծոգումը. այսպէս հայերէն՝ կեղծաւոր, թագաւոր, շնորհաւոր, սովորէն թէ որք բառերը բուն Ղարաբաղի բարբառն մէջ վերածուած են կիշդավիք, բանվիք, շնորհիք, սովիքիք, բանվիք ձեւերուն:

Մի քոնի բառերու մէջ յաջուղական ուռնեցող նախատառ. և ձայնը վերածուած է վ-ի և ասոր երբ հետեւանք յաջորդ ո ձայնն ալ գարձած եղած է ը. այս բառերն են վրէն՝ հոտ, վրէր՝ հոր, ջրհոր, վրէդ՝ հոդ:

Այս օրէնքին հպատակ են և երը օրինակ կը ծառայէն նաև նախատառ. և ունեցող բառերը, որոնց մասին յաջորդ բաժնին մէջ պիտի խօսուի ընդարձակօքէն:

Բայս օրէնքին հպատակ են և երը օրինակ կը ծառայէն նաև նախատառ. և ունեցող բառերը, որոնց մասին յաջորդ բաժնին մէջ պիտի խօսուի ընդարձակօքէն:

7.—կ այս պարագան ալ առանձին օրէնքի մը չենթարկուիք. եղած օրինակները հետևեալներն են. խմեցք (Գորիսի խմեցի)՝ ինսոցի, զիմուլ (Գորիսի զիմուլուկ)՝ զոքանչ. կէրբեուկ (Գորիսի և Թաղոտ կէրբեուկ)՝ գորտ կամ գորտնուկ. պիկի բողի. տէպէզ կամ Գորիսի բարբառով պէսպի՝ բոկան, բողիկ. հիւյկոնը (Գորիսի հիւյկոնը)՝ որոն. նմանապէս Գորիսի բարբառով բրերեց (բուն Ղարաբաղ բրերոց, Թաղոտ բրերոց)՝ օրօրոց:

8.—ա. ասոր վրայ պիտի խօսուի ով երկարբառին բաժնին մէջ:

#### Գ. Ո և Օ բառին սկիզբը.

Ա.—Ո-ի փոփոխութիւնները:

1. Աերը երկու տեղ (էջ ..... ) առիթ եղաւ խօսելու նախատառ ո-ի կրած ձեւափոխութեան վրայ Ղարաբաղի բարբառին մէջ. ասոնց մէտ առաջինին մէջ այն եզրակացութեան հասանց թէ Ղարաբաղի բարբառին (ինչպէս և մեր այժմ մեան երկու գրական բարբառներուն ծնունդ տուող մայր բարբառին) սկզբնական ձեւին մէջ նախատառ ո-ն ունեցած պիտի ըլլար ու երկարբառային արասանսնութիւնը, որ նոյն իսկ բառին սկիզբը գտնուելուն պատճառաւ հետզհետէ թանձրանալով սատացած է վ ձեւը (ինչպէս է այժմեան գրականներուն մէջ): Սակայն սորով հետեւ բուն Ղարաբաղի բարբառը վ ձայնին յաջորդող օ կամ ո ձայնը ը-ի-ի կը վերածէ, այսպէս և այս վ ձեւը աւելի յետոյ վերածուած է վիկուր է նախատառ ո-ի ձայնաշրջութիւնը բուն Ղարաբաղի բարբառին մէջ. օր, վրէր՝ վրէմար, վրէսկի՝ ոսկի, վրէոցակ՝ որձակ (աքազաղ). վրէսկրու՝ ոսկոր, վրէսամ՝ ոստացն (գորդ և լն հիւյեւու փայտեայ կազմած), վրէնել (հնագոյն \* վրէսնը ձևէն)՝ ոտն. վրէր՝ որ. վրէմար յետոյք: Ըստ այսմ այս բառերը անցած պիտի ըլլան ձայնափոխութեան հետեւալ շրջաններէն. ուրուուրու—վորս—վրէրս և լն:

Թաղոտ գիւղի բարբառը վրէ-ի տեղ ունի վր այսպէս վիմաւոր, վիսկի, վիսկո, վիմեր, վր, վիստան, վրց, վրցու, վիրցակ, իսկ Գորիսի բարբառը միջին (կամ գրականին) վ ձեւը անփոփի կը շարունակէ պահել. այսպէս՝ վօսկո, վօնիք, վօնիքի վօստան և լն:

2. Աերի ձեւերուն մէջ ո միշտ շեշտեալ է, այսինքն կը գտնուի միավանկ կամ երկավանկ բառերու մէջ, բազմավանկ բառերուն նախատառ անշեշտ ո ձայնը կը վերածուի ը-ի. օր, բրոնիկ՝ ողողէկ, բրորմիկ՝ ողորմել. բրնձալ՝ որոճալ, բրծալ՝ որոտալ, հրյոկուկ՝ ոլորել ճմոթկել (թուղթ և լն), բրիրլիկ՝ որքեայըի:

Այս պարագան երեան կը հանէ երկու ձայնաբառական օրէնքներու՝ այն է ձայնաւորներու

անկման և շեշտի տեղափոխութեան ծագման համեմատական ժամանակը, այս օրէնքնեւը հառատուած պիտի լինին Դարաբաղի բարբառին մէջ անշուշտ աւելի առաջ քան սկզբնատառ ո՞ին վո՞ի ձայնաշըջութիւր՝ որովհետև հակառակ պարագային, այսինքն երբ այս վերջին ճետիութիւնը աւելի հին կամ մինչև իսկ ժամանակակից լինէր ձայնաւորներու անկման օրէնքին, այն ժամանակ վերի բառերը \* վրդիկը, \* վրդումիլ, \* վրծալ և լին ձևերն ունեցած պիտի ըլլային այժմ:

Յ. «Թուն» բառին ո՞ն վերածուած է իւ-ի, որու վրայ սկզբնածայն և շունչն ալ աւելնալով բառու եղած է հիւլունը կամ հիւլունը:

Գ. Ոգնի բառին սկզբը աւելցուած է կ ձայնը և դարձած է իօզին, այս ձեն ալ սակայն աւելի հին պիտի ըլլայ, քան վրկ-ի օրէնքը, առանց որու բառը պիտի ստանար—լրէնի ձեր:

5. Ոջել բառը ըստ օրինի վրէիլ ձեն ստանալէ վերջ, րե-ն յաջորդ վանկի ի ձայնին ազգեցցութեամբ իւ-ի վերածելով եղած է վիլի. որով այդ բառին ճետիուխութեանց շարքը կը ներկայանայ այսպէս ողի—ուօիլ—վիլի—վրէիլ—վիլի. Գորիսի բարբառը կանգնած է երրորդ աստիճանին վրայ և ունի վիլի:

6. Որոճալ=Պ.թ. արօն մեկը ձերն մէջ ո դարձած է ա. բայց այս փոփոխութիւնն ալ աւելի հին է, քան վո՞ի օրէնքը, քանի որ հակառակ պարագային\* փառօն մեկը ձեր պիտի ունենայիք:

\*—Օ.ի փոփոխութիւնները.

1. Շեշտեալ օ ձայնը սկզբը կը մշայ ո. եղած բոլոր օրինակներն են. ինձը՝ օձ. օր. օրէնքի՝ օրէնք, օրինել, օրար՝ օդուա. օձէլ՝ կամ օձի՝ օձէլ:

2. Անշեշտ օ ձայնը համեմատ ընդհանուր կանոնին կը վերածուի ը-ի. առող համար ունինք միայն բրուց, բրուց, բրէրկ՝ օրօրոց օրինակը:

(Հարաբեկացուէլ)

Հրաշեայ Յ. Աճառին

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԽԾԱՓԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆ ԱՑԱՒ

### ՀԱՅՈՂ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄՀԷ

(ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ եւ ՌԱՍՏՈՒԱՆՔ)

(Եարումակուրիմ) \*

Ե.

Վ. Խ. Ա. Ս. Ա. Կ.

Այլապատանքի, մէջ մենք երկու կողմն ենք գտնում 1. պատմական, միացած կենցաղականի շետու 2. բուն առասպելական մաս Այս երկու մասն իրար միացած, իսկապէս կցուած են: Նախ տեսնենք առաջին մասը:

1.

Երուանդ—Հայոց պատմութեան մասը:

Երուանդ:—Հնչակէս աեսանք: Արտաշէսի ու Սամենիկի, Արգաւանի և Արտաւազզի մասին եղած առասպելներն են կրում նաև վիպասանք անուննր:

Պատմազիլը Երուանդի մասին և ապա նորա և Արտաշէսի կռիւը (Բ. լւ.—Խը) պատմելուց յետոյ՝ յիշում է իւր աղբիւրը. «Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ռւզիւպ քուրմ Հանեոյ զրող մեշենեկան պատմութեանց, և զայլ բազում զործա՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում եւ պարսից մատեանքն վկային և Հայոց երզն վիպասանաց» (Բ. Խը): Ուրեմն նա Երուանդի և Արտաշէսի պատմութիւնը մինչեւ ԽԸ. զլուին առնում է զրաւոր աղբիւրից, որի ինչ և ինչպիսի լինելը մեզ այստեղ չէ հետաքրքրում: Հայոց վիպասանք միայն իրրեւ վկայութիւն են կոչում այդ պատմութեան համար:

Ի նկատի ունենալով՝ որ պատմազիլը զրաւոր աղբիւրից է օգաւում, և այն հանգամանքը, որ նա առասպելից օգտուելիս իր «Ճամարտելով» փոփոխում է առասպելը և իրենից ու իւր լեզուով մի նոր բան է պատ-

\* Տես. Աշարա 1900 համար. Դ. եր. 140:

†. Հմետ. Մատ. Վիզանտ. Երեմ. եր. 262: